

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարեկակ	7 "
վեցամսեայ	7 "
Արասահմանի համար	15 ֆր.
սարեկակ	8 "
վեցամսեայ	8 "
Ա. Մերիկայի համար	3 ֆր.
սարեկակ	3 ֆր.
վեցամսեայ	1.50 ֆր.

Ծանուցում տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է: Երեկին ս էլի անգամներու համար 20 0/0 զեղը կը լայն:

Վառեայի համար ձեռք 40 սանթիմ է

# ՇԱԲԱԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՈՒՆ. ՔԱՂՍՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐԵԲՆԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԿ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯЪ

Պատկերի և դրամի կարգադրութեան հասցեին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

Արասահմանի համար ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութեան և տպարանի հասցե

ՇԱԲԱԿԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒՆԴԸ ԲԱԺՆԵՐԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿՆԻ ՎՃԱՐՆԵՐԸ

## ՏԻՔՔԱԹՈՒՐԱ

Ռուսական սահմանադրութեան կատակերգութիւնը որ սկսաւ Յարին մանիֆէստով, իր վախճանին կը մօտենայ: Հոսոյ արիւնի հեղեղներէն ետքը, ուր մկրտեցին զայն բռնապետութեան ներկայացուցիչները, արգէն պատրաստութիւններ կը տեսնուին սոսկալի հակահարուածի մը: Բացարձակ ապերաստութեն, կռուափորելու վարժուած ուսուցչուսկանները, արքայական ընտանիքի իշխանները, վարչապետները, նախարարները, թուրքերը Յարը իրենց գործիք չի ներկայացնիր: Բոլոր գործիքները սարսափելի դաս մը տալ: Պատերազմի արեւմտեան տպագրութեան տակ իրենց բրէսթի իրոսնցուցած ու բոլորովին խայտառակուած ըլլալով, կացութիւնը վրկելու համար, տիրահաշակ մանիֆէստ մը ստորագրելու ծարիրն, իսկ միւս կողմէ իրենց ստորակարգեալ նահանգապետներու կռուափորելներու, զօրավարներու եւ այլ պաշտօնեաներու միջոցաւ սկսան կատարի հալածանք բողոք ազատական շարժումներուն դէմ: Երկիրը անիշխանութեան մատնուեցաւ: Վարչութեան զանազան մասերը մէկը մէկ շեղուեցան: Ժողովրդին մէկ մասը սկսաւ միւսին վրայ յարձակիլ: Այս ամէնը թոյլատրեցին, քաջալերեցին, ցուցունելու համար անոնց որոնք զիջողութիւններ ընելու կուսակից էին, թէ բացի բռնակալութենէն ուրիշ ու է չէ ժիմով Ռուսիան կռուափորել անկարելի է:

Հեռագիրները հաղորդեցին արգէն թէ արդի նախարարապետը Վիթթէ պիտի հրամարի, և այս անգամ պիտի հաստատուէ տիքթաթուրան — բռնապետութիւնը:

Տիքթաթուրան իշխանութեան ձեռքէն է, որուն գլուխը զըտնուողը առանց ու է պատասխանատուութեան, ամէն ուղածը

կընէ կտրուկ կերպով: Արդ՝ ծանուցուած, տօնուած շնորհաւորուած սահմանադրութեան տեղ, ընդհակառակը, զարհուրելի տիքթաթուրանն է որ պիտի յաջորդէ: Ինչ որ Յարին իշխանութիւնը պակաս թուուց տղատական շարժումները զսպելու վայրագութեան մէջ, տիքթաթուրան կոչուած է լրացնելու... Ժողովրդին վրայ բռնակը պիտի քալէ անմիջապէս, երբ պզտիկ շարժում մը ըլլայ, երբ գործադուներ, խաղաղ համախառններ, թափօրներ, ցոյցեր կատարուին: Այս անգամ արիւնը ուղիներու պէս պիտի հոսի, մարդոց գիտելներէն լեռնակոյտեր պիտի ձեւանան: Մարդ կը դարհուրի այդ պատկերը նոյնիսկ աչքերուն առջեւ բերելով:

Այս վայրէջում անտէր, անպաշտպան ցեղերուն, որոնք քառութեան նոխազը պիտի ըլլան բռնակալին: Կատարած է գերու մոլեգնութեամբ պիտի յարձակին ամենէն աւելի անոնց վրայ ու պիտի զարգեն, կողոպտեն անխնայ: Լեհաստան, Ֆինլանտիա ու Կովկաս գեռ այնքան հի վրայ չի տեսնուած, չերեւակայուած վայրագութեանց ու նախճիրներու թատերադրան ըլլալ կերելին:

Ռուս յեղափոխական շարժումը միւս կողմէ կրկին իր կատարելալ վերարժարման մէջ է: Հասած լուրերէն կը յայտնուի որ յեղափոխական պայքարը ուժգնորէն վերսկսած է: Կարելի չէ այժմէն գիտնալ թէ ուս ազատականութիւնը որ աստիճան յարատեւութիւն ու տոկոսութիւն պիտի կարողանայ ցոյց տալ ոտքէն գլուխը զինուած բռնակալին հալածանքներուն դէմ: պիտի կրնա՞յ խլել անոր ձեռքէն իր իսկ արիւն քրտինքովը գնուած հրացանները, սուրերը, թնդանօթները, որոնք այսօր իր վրայ դարձուցած է բռնակալը: Մօտ ժամանակի մէջ պիտի պարզուի ամէն բան:

Ինչ որ ալ ըլլայ, սակայն պատ-

մութեան փորձառութիւնը մեզի ցոյց կուտայ որ ամբողջ ժողովրդի մը բազմին հետ կարելի չէ շարունակաբար իսպալ անպատիժ: Այն անգիտակից գործիքներու բանակը որ գուցէ վաղը թեւ ու թիկունք պիտի ըլլայ Յարին, վերջապէս պիտի զտնէ ինքզինքը ու պիտի զգայ իր շահը: Ասիկա անհրաժեշտ է և այս յոյսն է որ ուս ազատականները կը մղէ ամէն զոհողութեամբ պայքարը առաջ տանելու:

Մեզի համար, որ կը զգանք թէ կովկասահայութեան գլխին վրայ սպառնականորէն կախուած է մեծ վտանգը, ամենէն աւելի ցանկալի էր որ ուս ժողովրդային զանգուածը որ առաջ զգատանար ու գործիք ըլլալէ դադարէր քանի մը ինքնահաւան ու ամբարտաւան արքունի իշխաններու ձեռքին մէջ:

ՇԱԲԱԿ

## ՍՈՒԼԹԱՆԻ ՄԱՅԱՓՈՐԶԸ

ԱՄԲԱՍՏԱՆԵԱՆԵՐՈՒՆ ԴԱՏԱ ՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ԱՄԲԱՍՏԱՆԻՉ ԱՏԵԱՆԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԻՆ ՊԱՏՃԷՆԸ

«ՄԱՆՉՈՒՄԵՒ ԵՄՔԵՍՐ»-ԵՆ քաղաքում «Շար. Ասխուրդ թիւն և վերջ»

Ֆիլիպէ բնակող Անթոն Գոչ, բուն անունով Ամուս Ալաճաճեան Պոլսոյ յեղափոխական մասնաճիւղին գործերուն կարգադրութեան համար թըրթակցած է, դարձեալ Ֆիլիպէ բնակող Երուանդ Ալաճաճեանի հետ Սօֆիա բնակող Թադեոս Յակոբեան ալ յեղափոխական մասնաճիւղին գործառնութեանց տպահովման համար կարելու գումարներ զրկած են Լիբարիսի և Սիլվիոս Ռիչի: Դոնապան Մանուկ, սրճեփ նշան, դոնապան Առաքել, ճաշարանապետ Հաճի նշան, զպրոցական Մանուկ, փախստական Գարեգին, Յովակիմ, կոչկա-

կար Արշակ, Մկրտիչ եղբորորդին Յովակիմ, Գլուպին պաշտօնեաներէն Մանուկ, Պիթլիսի Ծրօ, Մկրտիչ եղբայր Յովաննէս ալ, այդ յեղափոխական մասնաճիւղին անդամ ըլլալով, կը կարգային և կը հետեւէին Դրօշակ յեղափոխական լրագրին, ընկերութեան անդամներուն ստուարանալուն կ'օգնէին և անընդատ կախատէին փութաջանութեամբ: Աստուք, հրանիթերն և պայթուցիկ նիւթերը իրենց նպատակին իբր միջոց ընդունած, ծանոթ տեղեր պահած և եղեռնական դէպքէն առաջ ու ետքը, դարձեալ ծանօթ տեղեր փոխադրած և բաժնած են: Աստուք մանուկ, նշան և խոհարար Հաճի նշան մասնաւորաբար յեղափոխական գործողութիւնները ուրոյն եղանակով մը շարունակելու գործին պետերն էին: Գրաւաճառ Յիւրա, Երուանդ Յովաննէան, Գլուպի սպասարներէն Պօլոս, միւս Մանուկ և Ռաչիկ ալ յեղափոխական ընկերութեան մասնակից էին: ասոնցմէ Երուանդ ու Յիւրա Դրօշակ լրագրի կը կարգային և ընկերութեան նիւթապէս կ'օգնէին: Երուանդ կը ընդունէր ու կը պահէր վառարկար նիւթեր: Պօլոս, միւս Մանուկ և Ռաչիկ ալ Գլուպի սպասարներէն վերոյիշեալ Մանուկ բերած պատմութիւնը փոխադրելու և պահելու գործին մասնակցած էին: Հարցաքննութեան տեղեկագրին մէջ մանրամասնութեամբ բացատրուած ու կէտ առ կէտ նշանակուած է մասնակցութեան բաժինը, աստիճանն ու շափը յիշեալ անձերուն, որոնք կազմակերպած էին այս յեղափոխական մասնաճիւղը, որուն նպատակն էր թէ Պօլսոյ մէջ և թէ՛ Օսմ. կայսրութեան այլև այլ կարելու կողմերը, յեղափոխական տխուր շարժում մը առաջ բերել հաւատարիմ հպատակներուն ու օտարագրի երեւելիներուն դէմ, անմիջական կերպով հիմնայատակ ընելով բնակարաններ և չէնքեր: Յիշեալ անձերուն այս մեծ ոճրին յանդիման ու մասնակցած ըլլալը հարցաքննութեան վաւերագրութեան մէջ արձանագրուած և հաստատուած է իրենց խոստովանութեամբը, տուած անձնական բացատրութեամբը, ապացոյցներով ու վճռական յայտնութիւններով, վաւերագրութեամբ և բազմաթիւ վկաններու յայտարարութեամբը: Հաստատուած է թէ այս եղեռնական նպատակին յատկացնելու մտքը գործածուած դրամին մէկ մասը Պանքայն առնուած է ուրուն արձանագրութիւնը կապացու-

ցանկ այս պարագան, Յեղափոխականներուն պատրաստած և ձեռք ձգած և ժողովի քով պահուած 140 քիլո մէլիկի մէջ, եղեռնական բռնկումին առթիւ գործածուածին մնացորդը, դռնապան Առաքելի ձեռքով պահուած էր Աւստրիական հիւանդանոցին մէջ. մէլիկի մէկ մասը դռնապան Մանուկի ձեռքով հորը նետուած և անհետացուած է. միւս պոմպաները և ուրիշ երկաթէ գործիքներն ու քանթիլ հրանիւթերը գտնուած և դուրս հանուած են Աւստրիական հիւանդանոցին, ձոնս արարելով մանին, Գրէզըր պանդոկին և մեծ Գլիպին նման երոպական հաստատութիւններէն: Աստուծո՛ւ: և այս կարգի զրական ապացոյցներէ զատ, որոնք անմիջական կապ մը ունին եղեռնական արարքին հետ, կառքին թեկոններուն վրայ կատարուած գիտական քննութիւնն և բաղդատութիւնն առաջ բերուած արդիւնքը, ինչպէս նաեւ բռնկումի պարագաները բացատրող գիտական քննութեանց տեղեկագիրները, կառքին ինչպէս բերուելուն և հայթայթուելուն նկատմամբ վիճանայի օսման սկզբնական և Մաքսային վերատեսչութեան պաշտօնական տեղեկագիրները, անխնայարտ անձերէն Լիբա Րիբի և ընկերներուն՝ Իզմիրի մէջ ալ իրենց խել մը մեղաւորներ գտնել ու հոն ալ խնդրարարական ձեռնարկներու յանդգնած պահունակներուն ալ բոլոր գործիքներով, հրանիւթերով և պայթուցիկ առարկաներով ձեռք բերուելու, և այս վերջիններուն մասին ալ անշատօրէն օրինական հարցաքննութիւն և կանոնական գործողութիւններ կատարուելու: Գարձեալ այս անձերու ընկերներէն ոմանց Պիլիքոնի մէջ ալ խնդրարարական մասնախումբ մը կազմելու և անոնց Պոլսոյ և Իզմիրի նկատմամբ խել մը ձեռնարկներ ու առաջադիմներ կատարած տասն, իրենց վաւերացումով և վերականգնող գործերով Հիւլէն կառավարութեան կողմէ ձեռք բերուելուն հարցաքննութեան և դատարանի ենթակիւնը բացայայտօրէն պարզուած է պաշտօնական գրութիւններու պարունակութեան մէջ: Հետեւ շարք Լիբա Րիբի կամ ուրիշ անունով Սաֆայի, Տիկին Սօֆի Րիբի, Տիկին Թորա Աննաբէլէնսի, Օր. Ռուպինա Պայի, Տիկին Երուզայի, կատարան Գրիգոր Վարչապետի, կատարան Յովհաննէսեանի, Աշոտի, Ար-

տաշ Խաչիկեանի, Ռորզով Գարուտեանի, Սիլվիո Րիչի կամ բուն անունով Վահանի, կատարան Մկրտիչ Ղարիպեանի, ձեռագրած Երուանդ Յրանկիւլեանի, Էտուար Թորիսի, դռնապան Յովհաննէսի, արձեփ Նշանի, դռնապան Մանուկի, դռնապան Առաքելի, Յովսէփի, Գլիպի սպասաւորներէն Մանուկի և Ախալթցի Յրոյի արարքները կը պատշաճին պատժական օրինագրքին 55րդ. յօդուածին և 58րդ. յօդուածին յաւելուածին առաջին հատուածին: Իսկ կոչակար Արշակի, զպրոցական Յովակիմի, զպրոցական Գարեգինի, Երուանդ Այաճաճեանի, Թազուր Յակոբեանի, գրաւաճառ Եղիայի, Երուանդ Յովհաննէսի, Պողոսի, Երկրորդ Մանուկի և Խաչիկի արարքներն ալ կը համապատասխանեն վերոյիշեալ 58րդ. յօդուածին առաջին հատուածին: Իսկ Մաթէոյի, Միլայի, Միլիթոյի և Մանուկի արարքներն ալ յիշեալ օրինագրքին 63րդ. յօդուածին տրամադրութեան համեմատ եղեռնական արարքներ են: Իսկ որոշուած է բեկանել հանրային իրաւանց դատը զպրոցական Մանուկի մասին որուն մահը քննութեամբ պաշտօնագրէս հաստատուած է և որ ձեռնարկներ մասին՝ որ քննութեան միջոցին անձնապահ եղած է:

Որոշմանագրին պարունակութեան կը համաձայնի նաեւ ընդհ. դատախազութեան պահանջները եզրակացութիւնն ալ որ կը պահանջէ իր և եղեռնագործ դատելի վերոյիշեալ անձերը և բեկանել Մանուկի և Նշանի նկատմամբ տեղի ունենալիք հանրային իրաւանց դատավարութիւնը:

Ընդհ. դատախազութեան օգնականը պահանջներին պարունակութեան արձանագրիչ քարտուղարն ալ ամբողջ պաշտօնաթուղիկը յանձնեց զատական մարմինին և երկու քննալիքը զորս ելան ժողովարարէն. ամբաստանիչ տեսանք անընդմիջաբար սկսու իր խորհրդակցութիւններուն: Ատեանը, նկատի առաւ վերոյիշեալ անձերուն եղեռնական ներպատակը և յեղափոխական ընդհանուր մեծ շարժում մը յարուցանելու մտադրութիւնը, (որոնք մանրամասնուած են վերը) և 1321 Հոկտ. 18ի նիստին մէջ միաձայնութեամբ որոշեց որ ամբաստանեալներուն առջինն ալ իր ոճրագրար դատուելն Պոլսոյ եղեռնագործ տեսանքին առջեւ:

Ամբաստանիչ տեսանքին տեղեկագրէն ետք կարդացուեցաւ նաեւ Պոլսոյ վերաքննիչ տեսանքին ընդհ. դատախազութեան 1321 Հոկտ. 22 թուակիր ամբաստանագիրը, որ մանրամասնօրէն պարզելէ ետք վերոյիշեալ անձերուն մտադրութիւնը, եղեռնական արարքը, և մասնակցութեան աստիճանը, գաւորները կամ քաղաքացիները իր հեղինակը նոյն ոճրագրար արարքին:

Ներկայ յօդուածը Պոլսոյ թերթերէն արտատպելով մեր ընթերցողներուն կը թողունք իրենց յարմար իմաստը տալ նոյնանման այս թուրք բացատրութիւններուն զորս թիւրք գրաքննութիւնը կը բռնագատէ անհրաժեշտարար գործածել Պոլսոյ թերթերուն մէջ Ծ Խ.

Ս Լ Ա Յ Ի Կ Ն Օ Թ Ե Ի

Հրէայ Ռաբբունի մը նամակը Ռուսաստանէն

Մեր անցեալ յօդուածով կը պարզելին Ռուսաստանի այլ և այլ անկիւնները տառապող հրէաներուն համար բացուած հանգանակութեան ձեռնարկները Լօնտօն, որ այնքան հոյակապ դասեր տուաւ բոլոր անոնց՝ որոնք հազիւ ինկած քիչ մը երջանիկ ոլորտի մէջ կը մոռնան ազգութիւնը, հայրենիքը, հայրենակիցը, լեզու, անուն ինչ:

Աշխարհական հրէութիւնը իր պարտականութիւնը շատ օրինաւոր կերպով կատարեց ու կը կատարէ: Հասարակութիւնը հրէաներ, որոսական վանտալիզմի անմեղ զոհերը դառնալէ վերջ, այսօր կրգգան բարեբար ձեռքերու կարկառու իրենց վրայ: Տասնեակ հազարաւոր ոսկիներ օրէ օր կը զրկուին անդիսական կատարութեան միջոցով, հիւսապատաններուն որոնք կը բաժնեն գումարը՝ պայմանաւ որ այդ գումարը գաղթելով չը ծառայէ:

Իւրերիս ալ ծանօթ է թէ ինչ վիճակի դատապարտուեցան հրէաները այս վերջին կոտորածներու առիթով. սակայն և այնպէս չեմ կրնար գրապել ինքզինքս հոս յառաջ բերել մէկ ընդարձակ, երբայցեքէն լեզուով գրուած նամակի մը թարգմանութիւնը՝ որ Ռուսաստանէն ծանօթ ուրբունի մը գրած է Լօնտօնի ուր-

բունապետ Տր. Կալըրի:

Ռաբբունին, որուն անունը արագիւտած է երեւան հանել, գրած է իր տողերը այնպիսի լեզուով մը՝ որ մերթ Բաբելոնի վշտահար ուրիշներուն ներքեւ լացող իսլայիլի զաւկներուն պատմութիւնը կը յիշեցնէ և մերթ՝ Մովսէսին ու Սալայիին վերջինները Եհովային բացառանշութիւնները, ու մեր վեներտա, թուրք լաւորթ ու պորտաբոյժ կղերականները կը յուսանք անտես չեն անցնեն այսպիսի օրինակելի դասեր:

Ահա՛ վերոյիշեալ նամակի իսկական և ամբողջ թարգմանութիւնը:

Վասն հազարներու արիւնով որոնք կոտորուեցան, և հարիւր հազարի՛ որոնք վիրաւորուած են և կը տատամարն կեանքի և մահու միջեւ, և միլիոնաւոր հիւանդներ աղաղակով որոնք միացին անտէր, անտուն և սովմահ լինելու վտանգի մէջ, և մեր դասն կուտ՝ Սրբազան Ռօբաի համար, որոնք պղծուեցան ու այրուեցան այն վայրագ գաղաններու միջոցով՝ որոնք սկսած արիւնները կը կոշտին Ռուսաստանի, որոնք կատարեցին այս մորթոտուները Բարձրագոյն կառավարութեան անուամբ և հրամանով. — կոչ կրնենք ձեզ՝ հրէայ պետերու, ըլլալով աղուաւորտ, նախախնամութեան պատգամարներ, որովհետեւ կարողութիւն ունիք զուր փրկելու Իսրայիլի որդեգր մնացորդ սպանութենէ. ջանախառն մէ և վերջնական կործանումէ: Կարողութիւն ունիք զուր ըսելու քանզոք հրեանակիւն. — սեռ քանչէ՛ր ձեռքէք, պահանջել որ մեր արեան վերջէք լուծուի և ազգիկը որ տառապանքները չը վերանորոգուին. Աստուած շննէ:

Մինչեւ օրս հրատարակուած մանիֆէստներուն մէջ, որոնց կատարութիւնը տակաւին չէ ջնջած հրէաներուն վրայ ծանրացած արգելքներէն մէկն անպատ. ո՛չ նոյն իսկ քաղքէ մը գիւղ տեղափոխուելու, ոչ, ո՛չ նոյն իսկ հրէայ զինուորի մը պարագային՝ որ իր կեանքը վտանգած է Մանջուրիս և տասն եւ երկու անգամ վիրաւորուած: Արգիւտած է իրեն մինչեւ անգամ գիւղեր մը անցնել Մոսկուա, և ուրիշ տեսակ ճիւղաւորութիւններ ևս կը կատարուին մեզ հանգէպ, կոտորած ու թալան, — այնպէս որ գոյութիւնն իս վտանգուած է այս վայրագ ժողովրդին անողորմութեան շնորհիւ. և

Գ Ր Ե Յ

ՕԳՏԱՎ ՍԻՌՊՕ

ՀԱՅՐ ԲԱՆՖԻԼ

(Թարգմանուած ֆրանսերէնէ)

Եւ Հայր Բանֆիլ հանգանակութեան ելաւ:

Գնաց գիւղէ գիւղ, ագարակէ ագարակ, զգեակէ զգեակ, դուռնէ դուռ. ձեռք կարկառելով, քամակը ծոկով, ճամբաներուն վրայ ուտելով երկու սուրի հացը, որուն վերածած էր իր սնունդը, և գիւղերը, երրորդ շատ հեռու գտնուէր Ռենոյէ, ապաւէն խնդրելով երիցասուններէն որոնք, Երբեմն կասկածանքով կը դուռնէին զայն:

Գնաց խելայեղիչ արեւին տակ, մահացնող ցուրտին մէջ, առանց երբէք կենալու, առանց երբէք հանգստանալու. առաջնորդուած լուսաշող պատկերէն որ կարծես զայն կ'առաջնորդէր ու կը պաշտպանէր, Հոս գէշ ընդունուելով, հոն նախատուելով, փողոցներու մէջ հալածուելով ստահակներէ որք կը ծաղրէին իր աղատու մօրուքը, սեւ կարկտաններով ծածկուած ճերմակ պատմուճանք, ճերմակ կտորուանքներով կարկտուած իր սեւ վերարկուն: Մուրացկանի այս տխուր վիճակին բոլոր ամօթը կրեց, բոլոր գաղտնութիւնները ճանչցաւ, ու, թէեւ տառապեցաւ սակայն ընաւ չիւրախեցաւ: Ի սկզբան անճարակ և երկչոտ, շատ չանցած յանգիւնութիւնը ձեռք առաւ և, իսկոյն, այնպիսի զիրուժեամբ մը որ զարմանալի է այդքան անկեղծ հոգիի մը, Հակառակ իր միամիտ մը և

կեանքի՛ բոլոր աղտոտութեանց կատարելապէս տղէտ մը ըլլալուն, արհեստին բոլոր խորամանկութիւններուն ընտելացաւ. այնու սկսան իրեն տարօրինակ չերեւայ կեանքի հազարումէկ խորագեանները, որոնք իսկապէս ուրիշ բան չեն բայց եթէ վտանգութեան զաղտնի զեղծութիւնը:

Անիկա սորվեցաւ թէ ինչպէս ընելու է շահագործելու համար մարդոց ունայնամտութիւնը և գէշ կիրքերը. և բնաւ չընկրկեցաւ դերասանական շողակրատութիւններու, ստուրիւններու, շիւ հաճոյակատարութիւններու, աստիկանական լրտեսութիւններու, քեմական վարպետարդի կեցուածքներու առջեւ. սկիզբները ինքզինքը խտտուել կշտամբած էր խղճի այս մոլորութիւններուն համար, որ կը մոռցուէին իր մորդու ար-

ժանապատուութիւնը և իր քահանայական հանգամանքը. վերջը արդարացուց զանոնք նպատակին մեծութեանը պատճառաւ, և նոյն իսկ, անիկա ետանդի կրկնապատկում մը գտաւ ատոր մէջ:

Երբեմն, այնպիսի օրերէ ետք, վերտիս հասոյթներու առջեւ, միթիւն ընդլուծման կը գոռային իր մէջ: Իր չիօթ խոհանքներուն խոհանքով վերջուումը ծովահէններու պատմութեանց, որոնցով իր միաբանի միտքը լեցուած էր, ինքզինքը շահակար զաղտնած կը գտնէր երազէրոյ յանգագն ձեռնարկներ, հոյակապ գողութիւններ զինեալ հրոսակներ որոնց զուր անցած փրկանքի կենթարկէր ժողովուրդները:

Քանի մը տարուան մէջ Հայր Բանֆիլ կատարեալ մուրացիկ մը եղաւ: Զոհողութեան գիւղուութենէ և յիմարութեան անպատասխանատուութեան

ասոնք ցոյց կուտան թէ նկատուած ենք մենք որպէս իրաւագուրկները (աուդիօ) : Երկրորդ թող գրեմք մեր վրայ :

Կոմս Թօլմիս, 1882ին, պզգու կերպով յայտարարեց թէ՛ ուր որ բոկորմներ տեղի ունենան, կառավարիչներ պատասխանատու թոնուրն ու իրենց պաշտօններէն վտարուին : Այն մարդասպան միմիստրը, իւլիէ, երեք տարի առաջ, երբ Բոլտավաի եւ Չէրնիկովի նահանգի գիւղացիներն ենր ստերուներ կը գործէին ազնուականներու կալուածներուն վրայ անձամբ գնաց Բոլտավա, խտորէն պատեց խոզարարները ու ծանր հարկեր դրաւ գիւղացուց վրայ վրասները հատուցանելու համար : Ինչ ըրաւ այդ մարդասպանը Քիլնէվի եւ Զովիլի պարագային : Բոլոր մարդասպանները ազատ արձակեց եւ Քրուչէվին շնորհակալութեան հաստիք ստացաւ իրմէ... Անկէ ի վեր մեր արիւնը չուրի նման հոսեց ժիւտովի մէջ, տնայէս որ այժմ կառավարութեան կողմէն մասնուած ենք սպանութեան եւ քանդուած վայ մեզ... Այս ինչ հասաւ մեր վերայ...

Նոյն իսկ հիմա կառավարութիւնը մեզ պատասխարելու ամենաթեթեւ ճշան մը իսկ չի ցոյց տար : Ամենափոքր նպատակ մը իսկ չէ ըրած : Չէ հրատարակած ու եւ չէ ազդարարութիւն, ինչպէս պարտաւոր էր ընել : Չերբակալած չէ խոզարարները, եւ անոնք որ զրգուած են խոզովութեան : Կառավարիչներն ու գլխաւոր պաշտօնները այն քաղաքներու : Եւր տեղի ունեցան ահուկ ու դաժան նախնիներ, ոչ նոյն իսկ շատ տեղեր : Եւր ոստիկանութիւնը մասնակցեցաւ թալանին ու դժնդակութեան : ազատ թողուած են իրենց պաշտօններուն վրայ, ինչպէս առաջ, կառավարութիւնը կը խոստանայ սալ լեկներուն ինքնավարութիւն, այլ ոչ մէկ խոստութիւն վերցուած է հրէաներու վրայէն, ոչ նոյն իսկ արածուած իրենց բնակիչ գիւղերը եւ նման կետեր :

Չեր ստիպողական պարտաւորութիւնն է ոտքի կանգնել արիարար մեր հալածուած ու անոք եղբայրներու օգնութեան համար : Մի՛ լուռ մնաք, վասնզի ծանօտ տագնապի մէջ ենք : Վիճակէք հինգ միլիոն հողիներուն եւ վրկեցէք վանոնք բացարձակ կործանուած : Չեր պարտականութիւնն է միթիկներ սարքել շա-

րունակաբար : — աղբել երկրագնդի զանազան անկիւնի մամուլին վրայ, ոտակէս զի անոնք բոլորն ալ հաւասար իրաւունքներ պահանջեն մեզ համար, որպէս զի այդ կոտորածները յառաջացնող կառավարիչները արդարութեան կանչուին, որպէսզի մարդասպանները պատժուին համաձայն օրինաց, որպէս զի վիսուց հատուցում մը տրուի բոլոր այն զաւառներուն վրայ՝ ուր ոճիրներ գործուած են եւ որ կարգ ու անգործութիւն տիրէ այն բոլոր տեղերը՝ ուր հրէաներ կայրին : Խնդրեցէք կազմել յանձնախումբ մը եւ զրկել ուշիմ պատգամաւորներ՝ կատարուածները քննելու եւ ճշմարտութիւնը կառավարութեան առաջ դնելու համար, որպէս զի վերջին չը շարժի միեւնոյն խորամանկութեամբ ինչպէս ըրաւ Քիլնէվի, Զովիլի եւ Ժիտովրի պարագային :

Կը խնդրենք ձեզ, Իսրայէլի գրէխաւորներ, մեր կացութիւնը չը հեռացնել մեր մտքէն, որովհետեւ Գէմսկիսեան սուր մը անգլոօրէն առկա ի վեր զլիսուն վերեւ, ու երկեքի մեկ ուրիշ կողմէ փրկութիւն չկայ՝ բայց եթէ Անգլիայ սպորդ Իսրայէլի զիտաւորներուն միջոցով : Կը խնդրենք պատասխանել անմիջապէս ձեզ ծանօթ հասցեով : Արեան արցունքներով կը գրենք, էւ Տիրով փրկութեան կապանք :

Այս նամարը որ թարգմանեցինք էսոս, զեանդուած էր անգլիական էն նշանաւոր օրաթերթի «Բէյլի Թէլէկրաֆի» մէջ ու այդ առթիւ գրուած խմբագրականը, ամենակծու տողեղէն մէկն է որ երբէք երեւցած ըլլար սոյն անգլիական ազնուակաւորութեանը ու ազնուակաւորութեան օրկանին մէջ :

Քուս կառավարութեան ու զրուած սլոքները, անոր կառավարիչներուն զէմ արձակուած խիստ խօսքերը, այն ալ անգլիական այրպիսի ուկայ կիսապաշտօնական օրաթերթի մը կողմէ, գրեթէ նորօրինակ էր, այլ ոչ անբացատրելի, եթէ խորը մանենք : Հրէաները, ունենալով հանրենձ շատ մը առայնակաբար անձնաւորութիւններ Անգլիոյ ֆինանսական ու քաղաքական աշխարհին մէջ — (խօսք կայ նոյն իսկ թէ Չէմպլըլիե անգամ հրկական շառաւիղէ յառաջ է եկայ) ունին մամուլի մէջ եւս հզօր

նեկայացուցիչնն, եւ «Տէյլի Թէլէկրաֆի» նման հսկայ օրաթերթի մը տէրն ու տերէնը իրէայ լօրա մըն է... Ահա թէ ինչով կը բացատրուին այն կատաղի յարձակումները՝ որ մերթ ընդ մերթ կը գործէ «Տէյլի Թէլէկրաֆի» ցարկովի զէմ, որ երկրին ներքը առաւել ազդու են քան հին փառքերով ապրող «Թայմզ» խօսքերը :

Մ. Յոլակ

ԱՅՏԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Վերջերս Ամերիկա հրատարակուող «Երիտասարդ Հայաստան» շաբաթական թերթի մէջ հանդիպեցայ «Յոլակ» ստորագրութեամբ յօդուածի մը : Պէտք է յայտարարեմ թէ ներկայ ստորագրողը եւ ոչ մէկ առնչութիւն ունի այդ անձին հետ : Չեմ գիտեր թէ պարունը երբեք ձեռք առած է «Նարմուտ» եթէ այն իր վարմանը գրական ասպարէկին մէջ մեծապէս պախարակելի արարք մըն է, այն է — այդ անունով երեցողին ծածկանունը գողանալ եւ գործածել : Ի հարկէ անունը մենաշնորհ մը չենք կարող ընել մեզ, միայն սանկատել կուտանք թէ՛ «Նարմուտ» եւ «Ն. Հ.» ըլլալով հակառակ ուղղութեան պատկանող թերթեր, անխոհեմութիւն մը մէկուն կողմէ կրնայ յօդուածագիրը ենթարկել անտեղի քննադատիքներու, ինչ որ կարելի է խնայել քիչ մը ընդհանուրի կողմէ ընդունուած օրէնքները յարգելով : Մանաւանդ մէկ կամ երկրորդ խմբագրութիւնը մեծ պատճառներ կուենան իր յօդուածագիրն ուղղամտութեան վերայ կասկածելու՝ քանի որ աչքի առաջ չունի այդ երկու անձնաւորութիւնները :

Կը յուսանք թէ «Ն. Հ.» յօդուածագիրն ու խմբագրութիւնը նկատի կառնեն այդ փափուկ կէտը եւ զոհացուցիչ լուծում մը կուտան :

Մ. Յոլակ

ՅԱՒԱԼԻ ԼՈՒՐ ՄԸ ԲԱՐԻՉԷՆ

Բարիզէն ցաւալի լուր մը հասաւ այսօր մեզի : որուն թէեւ կը փափագէինք հաւատ չընծայել, բայց ստիպուած ենք խոստովանելու թէ զժբաղդարար ճիշտ է : Ահա ինչ որ կը գրեն մեզի :

«Իտալիացուցիչ» Եւրոպայի ներկայացուցիչ Տօք. Լօրիս Մելիքեան մենամարտի է հրաւիրած Պ. Չերազը այն պատճառաբանութեամբ որ յիշեալը իր վերջին լուրին մէջ, ի միջի այլոց գրած է նաեւ հետեւեալ խօսքերը՝ «Երկրին պատուիրակութեան եւ անցեալ տարուան կաթողիկոսական պատուիրակութեան վրայ խօսելով : «1878ի պատգամաւորութիւնը իր իսկական արժէքով գնահատելու համար, կը բաւէ որ զայն համեմատութեան դնենք կաթողիկոսական վերջին պատգամաւորութեան հետ, որ անպատեհօրէն ուղարկուած ու գէշ կազմուած ըլլալով, կատարեալ ֆէսքօ մը եղաւ գրեթէ : Այլատեան ու Այվազեան եպիսկոպոսները արժանի չէին խրիմեանի մը կամ Լուսինեանի մը նոյն իսկ կօշիկին կապերը քակելու, Ի սկ աչխարհական պատուիրակը ուսուսահայ բժիշկ մըն էր, նուազ տեղեւակ գործերուն » :

Ընդգծուած տողերն են որ իբր գրողապատճառ կը ներկայացուին այս ցաւալի միջադէպին : Իննամարտին հրաւերը իբր ներկայացուցիչ Տօք. Մելիքեանի ստորագրած են Բիէր Քիլար եւ հայ բժիշկութեան ուսանող մը Թ... Ինն մը յայտնի չէ տակաւին երբ եւ ուր ըլլալուն մասին : Այսօր, գեկ, Չ Չերազ հարկադրուած է զրկել իր կողմէն եւ երկու հօգի, ժէռան եւ ուրիշ անձ մը՝ գործը կարգադրելու : Պ. Չերազ մեծ գովաւակութիւն կարտայայտէ ու կը գտնուի տաղնապալի դրութեան մէջ » :

Թեւեւ խզել խայթերը երթալով անհետացան, իր բարոյական բնուանուը ջնջուեցաւ : Կամ վարժութեամբ կամ ինքնամոխիման ոգիով, զրահուեցաւ անարգանքներու զէմ, ընդունենք խոչանքութեանը իբրեւ իր վիճակին անհրաժեշտութիւններէն մէկը :

Եւ կանակը ստրկացաւ, ոգնայարը երկիւղալից աչքը չեղ, եւ մուրաց կանութեան վարպետութիւններէն ձեռքը թոյլ, կասկածաւ եւ կեռածեւեղաւ :

Իր մասին ազտատ արկածներ կը պատմէին, որոնց վրայ կը խնդար ժողովուրդը, սակայն նրբատես հոգիները զիրաւ պիտի կրնային իր ինկած վեհութեանը մէջ գուշակել գերազանց հերոսութիւն մը կեղծառաքինութեան, կեղծ քաղութեան, կեղծ պատիւի պայմանադրութեանց մէջտեղ, որոնցմով կերտուած է

մարդկային հպարտութեանց խաւաքարտը :

Ատուու մը Հայր Բանֆիլի կանցնէր նախկին մտազործի մը կալուածին առջեւէն, կատաղի հանրակիչ մը, որ հարստացած էր ազգայնականներու բազմաթիւ ինչքերու յափշտակութեամբը : Գիտով, կոչու, անկարեկիր խեղճերու հանդէպ Տիրար Լը Պըռթոն — այս էր մարդուն անունը — մանաւանդ աչքի կը զարնէր իր անարգ անգլոութեամբը եւ իր մոլեգին ատելութեամբը կղերականներու հանդէպ :

Երկրին մէջ կատէին զայն եւ կը վախնային անկէ, Հայր Բանֆիլի այս բոլոր մանրամասնութիւնները գիտէր : Սակայն անիկա այս Լը Պըռթոնէն աւելի սոսկալիները տեսած էր, որոնք մեղմացած էին իր խօսքերէն : Նոյն իսկ դիտած էր որ երեւոյթով էն կատաղիները շատ ան-

գամ, կամ հպարտութեամբ եւ կամ յեղակարծօրէն էն վեհանձնները կերեւային :

Նախատական մերժումի մը վտանգը աչք առնելով — ինչ որ արդէն անոր համար նշանակութիւն չունէր այլեւս — անցաւ վանդակապատէն եւ զղեակ ներկայացաւ :

— Աս չունենանք ին ուրկէ՞ ուր հոս ինկեր է, պոռաց Լը Պըռթոն... ըսէ նայիմ, ինչպէս կը համարձակիս թու ազտատ օտքերդ աս տեղէն ներս խթելու, ինչ կուզես :

Չէք վանականը կը խոնարհէր, ետ ետ քաշելով ուսերը գրեթէ պաղատագին :

— Ազնիւ Պ. Լը Պըռթոն, կակազեց... ե՛ս...

Յիշոց մը իսկոյն ընդհատեց զինքը :

— Ձեւ չուզեր ինձի... ինչ կուզես... զրամ կուզես, զրամ, հէ՛ ազ-

տատ պապուկ, սպասէ, հիմա կառնես զրամը :

Թշուառականը դուրս պիտի ընէր զայն, երբ միտքը բան մը ինչալով ի վնաս արեղային զուարճանալու նըպատակաւ, հեգնական չեչտով մը աւելցուց :

— Մտիկ ըրէ՛, ծերուկ Տէր պապա՛ս, քեզի դրամ պիտի տամ... բայց պայմանով մը, այսինքն պիտի գաս անես իմ զրամ տեղէս : Եւ զրաւ կը դնեմ որ չի պիտի գաս անես :

— Դրաւ կը դնեմ որ պիտի առնեմ, ըսաւ Հայր Բանֆիլի ծանր եւ հաստատ ձայնով մը :

(Շարունակելի)

Ներկայ տողերը արձանագրելով շնորհակալութեամբ խոր վիշտը զսպել այն հաւանականութեան առջեւ թէ Տօք. Լորիս Մելիքովի նման մեր յեղափոխութեան համար շատ անհրաժեշտ անձնաւորութեան մը կեանքը, այս վայր կեանքիս, ինքնագովութեան մով ծերութի մը մէկ ձախաւեր բացատրութեան հետեւանքով կըրնայ վտանգի ենթարկուիլ, Անշուշտ Տօք. Մելիքովի շուրջ գտնուողներ պիտի զգացնեն թէ իրեն ներքին չէ հաւասարեցնել ինքզինքը Ձերագլին՝ անոր հետ չափուելու ելլելով: Մարդը միշտ ինքզինքը գովելու հիւանդութիւն ունի: Արդէն ամէն հայ համոզուեցաւ այս բանին տասնհինգ տարիէ վեր: Դարձիքի ազատութեան սկզբունքով զեկազարուելով Ձերագլի բացատրութեան մէջ յարգանքի, կերեւայ դիտմամբ, պակասութիւնն է որ մեղադրելի կը գտնենք ինչ որ նախատական գոյն մը կուտայ գրուածքին: Եւ կը յուսանք թէ պիտի Ձերագլ պէտք եղած միջոցներով իր թերութիւնը ճանշնալով աւելի առաջ երթալու պէտք չի ձգեր:

Ձերագլ ազատ է անշուշտ իր կարծիքը յայտնելու, որ կրնայ ճիշտը ըլլալ կամ ոչ: Բայց ներքին չէ գործածած ոճը:

**ՊՈՒԼԿԱՆՈՒԹ ՎՍԱՄԱՍԿԱՆՈՒԹԻՒՆԸ 1904 ԻՆ**

Հրատարակուած է Պուլկարիոյ 1904 տարուան վաճառականութեան վիճակագրութիւնը, զոր շատ գոհացուցիչ է երկրիս վաճառականութեան զարգացման տեսակէտով:

Անցեալ տարի Պուլկարիա ներածած է 129.700.000 Ֆր. ապրանք, և արտածած 157.600.000 Ֆրանքի: Պուլկարիոյ գոյութեան ի վեր և ոչ մէկ տարի այսքան զարգացած չէր արտաքին վաճառականութիւնը: ոչ ներածութիւնը և ոչ արտածութիւնը միասին կամ մասնակի գումարած, այսքան ուժեղ եղած չէր: Համեմատութեան գնելով պիտի տեսնենք:

Տարի	Ներած.	Արտածութ.
1879	32.1	20.1
1886(*)	64.3	50.4
1895	69.0	77.7
1896	76.5	108.7
1902	71.2	103.7
1903	81.8	108.0
1904	129.7	157.6

(\*) Հիւսիսային և հարաւային Պուլկարիոյ միացումէն ետքը:

**Օ Ր Ը Օ Ր Ի Ն**

Բարիքի «Նօթի» տէ սօսիչէ տաճանդէ սրահին մէջ տեղի ունեցած է միմիկն մը Հայաստանի եւ Մակեդոնիոյ համար, նախագահութեամբ նախկին զինուորական նախարար Գոյի Բէլըգանի:

Միմիկնին մէջ առաջին անգամ խօսք առած է Ֆրանսիոյ տէ Բրէսսանէ եւ սուր ու կտրուկ կերպով պարզած է թուրքոյ մէջ տիրապետող անու դողը:

Գծած է հայկական հարցին առաջին գրուագը. թրքական ծրագրուած քաղաքականութիւնը շարդերու, ամօթալից անհոգութիւնը ու անտարբերութիւնը Եւրոպոյոյ հայոց հերոսական անհատուար կոխի եւ այսօրուան վիճակը յուսահատական է աւելցնելով: Եթէ Եւրոպան չը փութայ պաշտպանել զարկ մը կարելի պիտի ըլլայ ոչնչացնել զանոնք:

Բրէսսանէն աստուած է իւր ճառը: յայտարարելով թէ Ֆրանսան պէտք է որ գործածէ իւր բոլոր ազգացութիւնը յարգել տալու համար թուրքոյ իւր ստանձնած միջազգային պարտականութիւնը հանդէպ Հայաստանի եւ Մակեդոնիոյ:

**ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ**

Շուժայէն թղթակից մը հետեւեալը կը գրէ:

«Տեղւոյս Ս Աստուածածին եկեղեցւոյ թագ. Խորհուրդը հրատարած ըլլալով սեպ 18-ին նոր ընտրութիւն եղաւ. սակայն նախորդները, կերեւայ թէ զղջացին իրենց հրատարականին վրայ եւ Պատրիարքարան զիմելով բեկանելու սուին ընտրութիւնը եւ իրենք սկսան ըստ առաջնոյն գործերը վարել ըստ կամոյ: Ասոր վրայ լաւուոյս հայ համայնքը ձանձկացած թաղական աշակերտ ապօրինութիւններէն նոյ. 2 ին Ազգ. վարժարանի մէջ հաւաքուելով ուղղակի թագ. խորհրդարան զացին եւ անպարտաճանաչ երեք ջոջ-ազաններ խորհրդարանէն դուրս վաճառեցին: Ժողովուրդը տետրակները ոստիկանայեանին առջեւ կնքելով եռանդամ յանձնարուածքի մը յանձնեց ինչպէս նաեւ արձանագրութեանց տետրակն ու կնիքը. որպէսզի առժամայէս ան վարէ տեղական գործերը:»

— Թաւանճեան եւ Էգնայեան. երկուքն ալ նախկին աշակերտներ Պուսոյ Մայր վարժարանին, որոշած են հիմքէն կառուցանել վարժարան մը: Ընտրութեան սկսած են պատրաստել շինուելիք շէնքին յատակագիրը:

Երբ արտասահմանի մէջ բնակող երկու հայեր յիշելով իրենց նախկին կրթարանը զայն նորոգելու կը ձեռնարկեն, մինչդեռ Վառնայի մէջ չը գտնուի մէկը որ ինք ալ աղջկանց վարժարան մը վերաշինելու գաղափարը յղանայ: Բանի որ այժմու շէնքը աճեն տեսակէտով հետի է վարժարանի մը յարմարութիւն ունենալէ եւ ոչ ալ պատուարեր Վառնայի հայութեան:

**ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

Պուլկարիոյ մէջ շինուող երկաթուղիներու պատճառով դուռը շատ անհանգիստ է, այդ շինուելիք երկաթուղիներու ճիւղելը

կեղծուէն կը մեկնին թրքական սահմանները և անկասկած, բացառապէս ռազմագիտական. նր պատակներով կը շինուին: Դուռն ալ, փոխադարձաբար մտադիր է: Մարմարայի և Էգիական ծովափնէն դէպի պուլկարական սահմանները նոր գիծեր շինել:

— Արտաքին գործոց նախարար Բեթթով կը փափաքի թուրքոյ հետ հաշտութեան մի նոր ու հաստատուն ընթացք մը ունենալ. Բեթթով այդ ուղղութեամբ կուզէ իւր քաղաքական ծրագիրը առաջ տանել: Եւ այդ պատճառով խորհուրդ կուտայ պուլկարական կառավարութեան առայժմ լուրջ թեմք գիտել, մինչեւ որ Եւրոպան իրաւանացիէ Մակեդոնիոյ համար մշտ կուտայ լէթօմներու ծրագիրը: Եթէ այդ փորձը անյաջող անցաւ, պէտք է Պուլկարիան նորէն զիմէ ինքնօգնութեան, և այդ պատճառով է որ նախարարը նպատակաւորմար կը համարի կազմ ու պատրաստ զօրք ունենալ ինչ գնով կուզէ թող ըլլայ, որովհետեւ, ըստ Բեթթովի, Պուլկարիան պալքանի Բրուսիան է: Պուլկարիան պատրաստ է նոր փոխառութիւններ ընել ուժեղ զինման համար:

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա  
Ձինուորական նախարար Բիզաբաշան, զոր Մակեդոնիոյ մէջ ներմուծուելիք ֆինանսի քոնթրոլ ընդունուելու մասին հակառակած էր նախարարական խորհուրդին մէջ, նոյն իսկ փոփոխութիւններով, հրաման ստացաւ ստորագրել Մազպաթանիւր ընկերներու հետ միասին, զոր ուղարկուած էր Երււրը:

— Նոյ. 23 — Սուլթանը տուաւ իրատէն, զոր հազորդութեան և զեսպաններուն, որոնք կընդունի ֆինանսի խորհրդածոյովը, կազմակերպուած Անգլիոյ, Գաղղիոյ, Իտալիոյ և Գերմանիոյ գործակատարներէ, ամբողջացած Մակեդոնիոյ արդի քաղաքական գործակատարներով. նոյն ժամին Դուռը ներկայացուցած է զեսպաններուն, ծրագիր մը Մակեդոնիոյ Ելեմտից համար, զոր հաստատ աղբիւրներու վկայութեամբ, շատ անգոհացուցիչ է — Դեսպանները խնդրոյ առարկայ կընեն այս ծրագիրը, որ հարկը դուռ է իրենց, հաւանական կը թուի թէ պիտի փոխանակէ իրենց կողմանէ առաջարկուածը և կամ պիտի ձուլուի անոր հետ միասին:

Կը հաստատեն թէ հարցը սկզբունքով կարգադրուած է և թէ զրահաւորները ետ քաշուելու են շուտով:

— 24 նոյ. — Դեսպանները Ե

րէկ գիշեր խորհուրդի էին գումարուած պարոն Գալիչէի տան մէջ: Թուրքիոյ առաջարկները քննելու համար խորհուրդը երկար տեւեց և նա արտակարգ ոգեւորուած էր: Դեսպանները տակաւին ու է մի եզրակացութեան յանգած չեն: Անգլիական զեսպանը կը պնդէ թէ այն փոփոխութիւնները որ կուզէ թուրքիա, հակառակ են քոնթրոլի սկզբունքին, և զայն կը չէզոքացնեն, նմանապէս աւստրիական դեսպանը այն պահանջներն է որ պէտք է մերժել թուրքիոյ առաջարկները. Իտալիա և Գերմանիա կը պնդեն, զոհացնել թուրքիան, որովհետեւ անոնք առեւելոյ թէ Գերմանական զեսպանը սրտագին կը պաշտպանէ թուրքիան. հաւանական է որ նա յաջվանակէ, մինչդեռ միւս զեսպանները Անգլիոյ գործառնութիւնը կը պաշտպանեն:

— Պէլկրատ 24 նոյ. — Իրիզրէնէն կիմացնեն թէ Միւսուլմանները, փորձած են սպաննել ռուս կան հլւպատոսը. սպաննութեան փորձին արգելք Իղած է հիւպատոսին կազմը:

— Թիւրք իշխանութիւնը կը վախնայ մի գուցէ ներքին գաւառներու մէջ ապստամբութիւն պատահի. խստիւ հրամայեց զինուորներ եւ ռազմամիներք պարունակող կառավարական տեփոները տշալուրջ հոկողութեան տակ առնել:

— Մուլաներուն հրամայուած է մզկիթներու, մէջ թուրքերուն քարոզել խաղաղութեամբ ապրել քրիստոնեաներու հետ. հրամայուած է նրոյպէս թիւրք ոստիկանութեան, ձերբակալել այն ամեն գիւնով թիւրքերը որոնք քրիստոնեաներու հանդէպ գէշ վարմունքի մէջ կը գտնուին:

**Թ Ո Ւ Ս Ի Ա**

Սէլաստաբուլէն կիմացնեն թէ ապստամբներու խմբակառուցման հրացանի բաժնուած է:

— Պուլկո 23 նոյ. — Օտէոայի և Պուլսոյ մէջ եղած ընդձոճեայ հեռագրական գիծը տակաւին կտրուած չէ:

Թուսիայէն եկած լուրերը սարսափելի են. գրութիւնը չը կար ծուածէն աւելի քրիգիք է. — Օտէոայի անգլիական հիւպատոսը կը հեռագրէ թէ՛ օտարահրպատակներու կեանքը վտանգի տակ է:

Անգլիական զեսպանատան հրամանով, անգլիական շոգենաւային ընկերութիւններ, ուղարկեցին Օտէոա շատ մը շոգենաւեր անկէց առնելու և Պուլկո փոխադրելու համար անգլիական հպատակները: